23.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 22-ի N 2125 - Լ որոշման

ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է աջակցել Արցախի բնակչության կոմունալ ծախսերի կատարմանը:

2. Աջակցությունը տրվում է Արցախի Հանրապետության կառավարությանը, 1 մլրդ դրամի չափով, Արցախի տարածքում 2020 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին բնակչության սպառած էլեկտրաէներգիայի և գազի ծախսը ֆինանսավորելու համար:

3. Սույն միջոցառմամբ նախատեսված գումարները նվիրաբերության պայմանագրի հիման վրա հատկացվում են Արցախի Հանրապետության կառավարությանը՝ Արցախէներ-գոյին և Արցախգազին փոխանցելու նպատակով:

4. Աջակցությունը հատկացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ